

ՀԱԳՄՉ 09.30

Երկրորդ հրատարակություն
1 հոկտեմբերի 2008թ.
Ներառում է փոփոխություններ

Պայթուցիկ զինամթերքի վերացում

Տնօրեն,
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ),
2 United Nations Plaza, DC2-0650
New York, NY 10017
USA

Էլ. Փոստ՝ mineaction@un.org
Հեռախոս՝ (1 212) 963 1875
Ֆաքս՝ (1 212) 963 2498
Կայքէջ՝ www.mineactionstandards.org

Նախագրուշացում

Սույն փաստաթուղթն ուժի մեջ է մտել կազմի վրա նշված ամսաթվից: Քանի որ Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչները (ՀԱԳՄՉ) պարբերաբար վերանայվում և թարմացվում են, դրանից օգտվողները պետք է այցելեն ՀԱԳՄՉ ծրագրի կայքէջը վերջինիս կարգավիճակը ստուգելու նպատակով (<http://www.mineactionstandards.org/> կամ ՄԱԿԱԾ կայքէջ հետևյալ հասցեով՝ <http://www.mineaction.org>):

Հեղինակային իրավունք

ՄԱԿ-ի սույն փաստաթուղթը Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչ է (ՀԱԳՄՉ) և սեփականության իրավունքով պաշտպանված է ՄԱԿ-ի կողմից: Ոչ սույն փաստաթուղթը, ոչ էլ դրա որևէ հատված չի կարելի վերարտադրել, պահել կամ որևէ այլ միջոցով, կամ ձևով փոխանցել որևէ այլ նպատակի համար՝ առանց ՄԱԿ-ի անունից գործող ՄԱԿԱԾ-ի կողմից նախապես գրավոր համաձայնություն ձեռք բերելու:

Սույն փաստաթուղթը ենթակա չէ վաճառքի:

Տնօրեն
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ)
2 United Nations Plaza, DC2-0650
Նյու Յորք, NY 10017
ԱՄՆ

Էլ-փոստ՝ mineaction@un.org
Հեռախոս՝ (1 212) 963 1875
Ֆաքս՝ (1 212) 963 2498

Բովանդակություն

Բովանդակություն	iii
Նախաբան	iv
Պայթուցիկ զինամթերքի վերացում	1
1. Ծավալ	1
2. Փաստաթղթեր	1
3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ	1
4. Պայթուցիկ զինամթերքի վերացման (ՊԶՎ) ընթացակարգեր և գործողություններ	2
4.1. Ընդհանուր սկզբունքներ	2
4.2. Որակավորումներ	3
4.3. Որակավորումների որակ և աուդիտ	4
4.4. Չեզոքացման և վնասազերծման ընթացակարգեր	4
4.5. Վերացման ընթացակարգեր	5
4.6. Ականների և ՊՊՄ-ների տեղափոխումը, նրանց հետ աշխատանք և պահեստավորում	5
5. Պարտավորություններ	6
5.1. Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)	6
5.2. Ականազերծող կազմակերպություններ	6
Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր	7
Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հապավումներ	8
Փոփոխությունների գրանցում	9

Նախաբան

Մարդասիրական հակաականային ծրագրերի միջազգային չափորոշիչները առաջին անգամ առաջարկվել են 1996թ. հուլիսին Դանիայում տեղի ունեցած միջազգային տեխնիկական գիտաժողովի աշխատանքային խմբերի կողմից: Չափորոշիչներ են սահմանվել ականազերծման բոլոր ասպեկտների համար, չափանիշեր են առաջարկվել և համաշխարհային նոր սահմանում է տրվել «ականազերծում» գաղափարին: 1996թ վերջում Դանիայում առաջարկված սկզբունքները զարգացվել են ՄԱԿ-ի կողմից անցկացվող ժողովի աշխատանքային խմբի կողմից և մշակվել են Մարդասիրական ականազերծման գործողությունների միջազգային չափանիշերը: Առաջին հրատարակությունը տպագրվել է ՄԱԿ-ի ականազերծման ծառայության (ՄԱԿԱԾ) կողմից 1997թ. մարտին:

Այս նախնական չափորոշիչների ծավալները այդ ժամանակից ի վեր ընդլայնվել են՝ ներառելու հակաականային գործողությունների այլ բաղադրիչներ և արտացոլելու գործողությունների, գործընթացների, գործելաձևերի և նորմերի հետ կապված փոփոխությունները: Չափորոշիչները վերամշակվեցին և վերանվանվեցին որպես Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ), որի առաջին հրատարակությունը լույս տեսավ 2001թ. հոկտեմբերին:

ՄԱԿ-ն ընդհանուր պարտավորություններ ունի ականային ծրագրերի արդյունավետ կառավարումը խրախուսելու և կյանքի կոչելու համար, որը ներառում է չափորոշիչների մշակումն ու պահպանումը: Այդ պատճառով ՄԱԿԱԾ-ը ՄԱԿ-ում տեղակայված այն գրասենյակն է, որը պատասխանատու է ՀԱԳՄՉ-ի մշակման և պահպանման համար: ՀԱԳՄՉ ստեղծվում է Ժնևի Մարդասիրական ականազերծման միջազգային կենտրոնի աջակցությամբ:

ՀԱԳՄՉ-ն պատրաստելու, վերանայելու և վերափոխելու աշխատանքը իրականացվում է տեխնիկական հանձնաժողովների կողմից միջազգային, կառավարական և հասարակական կազմակերպությունների օժանդակությամբ: Յուրաքանչյուր չափորոշիչի ամենավերջին տարբերակը, տեխնիկական հանձնաժողովների կատարած աշխատանքի հետ միասին կարելի է գտնել <http://www.mineactionstandards.org> կայքում: Առանձին ՀԱԳՄՉ-ները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ արտացոլելու հակաականային գործողության զարգացող նորմերն ու պրակտիկան և միջազգային կանոնակարգերի և պահանջների շարքում ներառելու կատարվող փոփոխությունները:

Ներածություն

Պայթուցիկ զինամթերքի վերացումը (ՊԶՎ) ներառում է Պայթուցիկ զինամթերքի (ՊԶ) վերացումը, որոնք ներառում են ականները և Պատերազմի պայթուցիկ մնացորդները (ՊՊՄ): Սակայն ըստ Մովորական որոշակի զինամթերքների (ՍՈՁ) Արձանագիր V-ի ՊՊՄ-ները ներառում են Չպայթած զինամթերքը (ՉՊԶ) և Լքված պայթուցիկ զինամթերքը (ԼՊԶ), բացառությամբ ականառումների:

Մինչդեռ գործնականում ՊԶՎ գործողությունները ներառում են բոլոր ՊԶ, ներառյալ ականների վերացումը, նրանք հիմնականում կենտրոնանում են ՊՊՄ վերացման վրա, իսկ ականագերծման գործողությունների ընթացքում հայտնաբերված ՊՊՄ մեծ մասն իրենցից ներկայացնում են փոքր ՉՊԶ և ԼՊԶ մասնիկներ, ինչպիսիք են ենթազինամթերքները, նռնակները և ականանետները: Սակայն ՊՊՄ շարքին կարող են դասվել նաև առավել խոշոր իրեր, ինչպիսիք են հրետանային զինամթերքները, կառավարվող ռումբերը, ավիացիոն ռումբերը և ԼՊԶ կուտակումները: ՊՊՄ չափերի և բարդության մեծ բազմազանությունը հատուկ ուշադրություն է պահանջում ՊԶՎ կառավարման և տարաբնույթ սարքավորումների հետ աշխատելու համար անհրաժեշտ որակավորումների նկատմամբ:

Սույն չափորոշիչի նպատակն է հատկորոշումներ և ուղեցույցներ տրամադրել ՊԶՎ կառավարման համար՝ որպես ականագերծման գործողությունների մի մաս: Այն ներառում է ՊԶՎ ընդհանուր սկզբունքները և կառավարման պարտավորությունները: Այն չի տրամադրում հստակ տեխնիկական ուղղություններ կոնկրետ ՊԶ վերացման համար:

Պայթուցիկ զինամթերքի վերացում

1. Ծավալ

Սույն չափորոշիչն ուղենիշներ և ուղեցույցներ է տրամադրում որպես ականազերծման գործողությունների ծրագրի մի մաս Պայթուցիկ զինամթերքի անվտանգ վերացման (ՊԶՎ) համար: Այն վերաբերում է ականների և ՊՊՄ վերացմանը: Վնասազերծման նպատակներով ականազերծման տեղամասերի անվտանգության և որակի պահանջները ներկայացված են այլ ՀԱԳՄՉ-ում:

Սույն չափորոշիչը կիրառելի չէ միջուկային, կենսաբանական կամ քիմիական զենքերի վերացման համար: Ականազերծման գործողությունների ազգային մարմինների (ԱԳԱՄ) համար անհրաժեշտ կլինի ձեռք բերել և տարածել մասնագիտական խորհրդատվությունը նման զենքերի և զինամթերքների ու անհրաժեշտության դեպքում նրանց վերացման վերաբերյալ: Սույն չափորոշիչը չի ներառում նաև թունավոր և քաղցկեղածին բաղադրիչները, չնայած որ որոշակի ականներ (ինչպիսիք են ՊՖՄ1) կարող են դասվել այս շարքին:

2. Փաստաթղթեր

Հավելված Ա-ում բերված է նորմատիվ փաստաթղթերի ցանկը: Նորմատիվ հղումները կարևոր փաստաթղթեր են, որոնց հղում է կատարվում սույն չափորոշիչում և որոնք կազմում են սույն Ուղենիշի դրույթների մի մասը:

CWA 15464:2005 – Մարդասիրական ականազերծման գործողություն – ՊԶՎ Կոմպետենտության չափորոշիչները (5 մաս) ուղղություններ են ներկայացնում ականազերծման գործողությունների իրականացման ընթացքում որպես ՊԶՎ մի մաս սովորական զինամթերքների վերացման ժամանակ ՊԶՎ 1-ին, 2-րդ և 3-րդ մակարդակների համար անհրաժեշտ կոմպետենտությունների վերաբերյալ:

Վնասազերծման պահանջները ներկայացված են ՀԱԳՄՉ 09.10-ում: Մարտական գործողությունների տարածքի վնասազերծումը (ՄԳՏՎ) ներկայացված է ՀԱԳՄՉ 09.11-ում, իսկ ականազերծման աշխատանքային վայրերի անվտանգությունը ներկայացված է ՀԱԳՄՉ 10.20-ում:

Ականազերծման գործողությունների տեխնիկական նշումների (ԱԳՏՆ) մի մասը կոնկրետ ուղեցույցներ է տրամադրում որոշակի ՊԶ վերաբերյալ: Անհրաժեշտ ԱԳՏՆ համար տես Հավելված Ա-ում բերված տեղեկատվական հղումները:

3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ

Հավելված Բ-ում բերված է սույն ուղենիշում կիրառված տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը: ՀԱԳՄՉ-ում կիրառված բոլոր տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը բերված է ՀԱԳՄՉ 04.10-ում:

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքում «պետք է», «հարկավոր է» և «կարող է» բառերն օգտագործված են համապատասխանության նախատեսված մակարդակը ցույց տալու նպատակով: Այդ կիրառումը համապատասխանում է ISO չափորոշիչների և ուղենիշների լեզվի հետ:

ա) «պետք է» կիրառվում է ցույց տալու համար այն պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները, որոնք պետք է ընդունվեն չափորոշիչին ամբողջությամբ բավարարելու համար.

բ) «հարկավոր է» օգտագործվում է նախընտրելի պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները ցույց տալու համար.

գ) «կարող է» օգտագործվում է գործողության հնարավոր մեթոդը կամ ընթացքը ցույց տալու համար:

«Ականազերծման գործողությունների ազգային մարմին» (ԱԳԱՄ) տերմինը վերաբերում է ականներ ունեցող բոլոր այն երկրների պետական վարչություններին, կազմակերպություններին կամ հաստատություններին, որոնք պարտավոր են կարգավորել, կառավարել և համակարգել ականազերծման գործողությունները: Դեպքերի մեծ մասում Ականազերծման գործողությունների ազգային կենտրոնը (ԱԳԱԿ) կամ դրան համարժեք հաստատությունը հանդես է գալիս որպես ԱԳԱՄ կամ գործում է նրա անունից: Որոշ իրավիճակներում և որոշակի պահերին ՄԱԿ կամ այլ ճանաչված միջազգային մարմնի համար կարող է անհրաժեշտ և պատշաճ լինել ստանձնել ԱԳԱՄ որոշ կամ բոլոր պարտականությունները և իրականացնել որոշ կամ բոլոր գործառույթները:

“Ականազերծող կազմակերպություն” տերմինը վերաբերում է ցանկացած կազմակերպությանը (պետություն, ՀԿ կամ առևտրային կազմակերպություն), որը պատասխանատու է ականազերծման ծրագրեր կամ առաջադրանքներ իրականացնելու համար: Ականազերծող կազմակերպություններն իրենց մեջ ներառում են գլխամասային գրասենյակներն ու օժանդակ տարրերը և բաղկացած են մեկ կամ ավելի ստորաբաժանումներից (տես ստորև):

“Պայթուցիկ զինամթերք” (ՊԶ) տերմինը վերաբերում է պայթուցիկ նյութեր, միջուկային բաժանիչներ, սինթետիկ նյութեր և կենսաբանական և քիմիական ազենտներ պարունակող բոլոր զինամթերքներին: Սրանք ներառում են ռումբերը և զինամասերը, ուղղորդվող և բալիստիկական հրթիռները, հրետանին, ականանետները, հրթիռները և փոքր զինամթերքների փամփուշտները, բոլոր ականները, տորպեդները և խորքային ռումբերը, հրատեխնիկական, կասետային ռումբերը և բաշխիչները, փամփուշտների և պայթուցիկ նյութերի միջոցով գործարկվող սարքերը, էլեկտրոնային պայթուցիկ սարքերը, թաքնված և իմպրովիզացված պայթուցիկ նյութերը և գոյություն ունեցող բոլոր նման կամ հարակից իրերը կամ բաղադրիչները:

“Պատերազմի պայթուցիկ մնացորդներ” (ՊՊՄ) տերմինը վերաբերում է Չպայթած զինամթերքին (ՉՊԶ) և Լքված պայթուցիկ զինամթերքին (ԼՊԶ), բացի ականառումներից:

4. Պայթուցիկ զինամթերքի վերացման (ՊԶՎ) ընթացակարգեր և գործողություններ

4.1. Ընդհանուր սկզբունքներ

ՊԶՎ գործողությունները ներառում են ՊԶ հայտնաբերումը, նույնացումը, դաշտային գնահատումը, վնասազերծումը, վերականգնումը և վերացումը: ՊԶՎ կարող է իրականացվել որպես ականազերծման գործողությունների ընթացիկ մաս, որը հետևում է վտանգավոր տարածքներում կամ նրանց շուրջը ՊՊՄ-ների հայտնաբերմանը: ՊԶՎ գործողությունները պետք է նաև իրականացվեն վտանգավոր տարածքներից դուրս հայտնաբերված ՊՊՄ վերացման համար: Նման միջոցառումները կարող են ներառել ՊՊՄ միայն մեկ միավոր, կամ մի շարք միավորներ՝ հայտնաբերված որոշակի տարածքի վրա, ինչպիսիք են ականանետի կամ հրետանային զենքի տեղակայման կետերը: Այն կարող է ներառել նաև զինամթերքների կուտակումները, բունկերներում կամ զինամթերքների պահպանման վայրերում մնացած ԼՊԶ-ները:

Այնուամենայնիվ, չափորոշիչը չի ներառում հակահետևակային ականառումների կուտակումների վերացումը՝ համաձայն Հակահետևակային ականների արգելման համաձայնագրին (ՀՀԱԱՀ)¹: Հակահետևակային ականառումների կուտակումների վերացման ուղենիշը ներկայացված է ՀԱԳՄՉ 11.10-ում:

Հակաականային գործողությունների ծրագրերի արդյունավետ կառավարումն անհրաժեշտության դեպքում ներառում է անվտանգ և արդյունավետ կերպով ՊԶՎ իրականացման հնարավորությունների ստեղծումը և պահպանումը: Սա ներառում է ՊՊՄ ռիսկերի պաշտոնական գնահատումը և անվտանգ ու արդյունավետ ՊԶՎ հնարավորությունների ստեղծումը: Նման հնարավորությունը պետք է ներառի չեզոքացման և վնասազերծման պատշաճ ընթացակարգերի նախապատրաստումը, լավ կրթված և որակավորված ականազերծողների և ՊԶՎ օպերատորների օգտագործումը, ինչպես նաև արդյունավետ և ապահով սարքավորումների, պահեստավորման վայրերի և պարագաների կիրառումը: Հայտնի է, որ որոշ ծրագրեր ունեն ՊԶՎ ամբողջական հնարավորությունների սահմանափակ կարիք: Նման դեպքերում ԱԳԱՄ պետք է մշակի և տրամադրի ՊԶՎ համապատասխան պատասխան:

Անվտանգ և արդյունավետ ՊԶՎ հնարավորությունների զարգացումը կարող է պահանջել փորձագիտության մակարդակների սահմանումը՝ գործառնական պահանջների բազմազանության հետ գործ ունենալու նպատակով: Որպես ընդհանուր սկզբունք օպերատորները պետք է աշխատեն միայն այն իրերի և իրավիճակների հետ, որոնց վերաբերյալ իրենք կրթվել են և ստացել անհրաժեշտ լիազորությունները: Բոլոր մյուս դեպքերը պետք է ներկայացվեն փորձագիտության հաջորդ առավել բարձր մակարդակին:

4.2. Որակավորումներ

ՊԶՎ կարող է իրականացվել բազմաթիվ մակարդակների վրա՝ սկսած խոշոր ռումբերի և հրթիռների չեզոքացումից, մինչ նռնակների և ենթազինամթերքների վերացումը: ՊԶՎ որակավորումները պետք է համապատասխանեն վտանգին և հայտնաբերման համար առավել հավանական զինամթերքների տեսակներին: Բոլոր ՊԶՎ օպերատորների որակավորումը պետք է բավարարի ԱԳԱՄ կամ նրանց անունից, կամ էլ նրանց փոխարեն գործող մարմնի պահանջները և կանոնակարգերը, որոնք որակավորումից բացի կարող են պահանջել հնարավորությունների ապացույցների ներկայացում: Որպես ուղենիշ՝

- ա) 1-ին մակարդակի (ՊԶՎ) որակավորումը հնարավորություն է տալիս որակավորման վերապատրաստված կրողին որտեղ հնարավոր է հայտնաբերել, բացահայտել և տեղում վերացնել առանձին ականներ կամ ՊՊՄ, որոնց վերաբերյալ կրթվել է այդ անձը;
- բ) ի լրումն 1-ին մակարդակի (ՊԶՎ) որակավորման ունակություններին, 2-րդ մակարդակի (ՊԶՎ) որակավորումը հնարավորություն է տալիս որակավորման կրողին որոշել, թե երբ է անվտանգ շարժել, տեղափոխել և վերացնել մեկ կամ մի քանի ականներ և ՊՊՄ-ներ, որոնց վերաբերյալ կրթվել է այդ անձը;
- գ) ի լրումն 1-ին և 2-րդ (ՊԶՎ) մակարդակի որակավորման ունակություններին, 3-րդ (ՊԶՎ) մակարդակի որակավորումը հնարավորություն է տալիս կրողին իրականացնել վնասազերծման ընթացակարգերը և պայթուցիկ զինամթերքի ցանկացած տեսակի վերջնական վերացումը, որոնց վերաբերյալ կրթվել է այդ անձը;

¹ Հակահետևակային ականների օգտագործման, կուտակման, արտադրության և տեղափոխման արգելման և նրանց վերացման մասին համաձայնագիր:

դ) ի լրումն 1-ին, 2-րդ և 3-րդ (ՊԶՎ) մակարդակի որակավորման ունակություններին, 4-րդ (ՊԶՎ) մակարդակի որակավորումը նախատեսված է ՊԶՎ մասնագետ օպերատորների համար, ովքեր կրթվել և որակավորվել են մնացած ՊԶՎ վտանգների վերացման ուղղությամբ՝ օգտագործելով ՊԶՎ մասնագիտացված տեխնիկաները: Նման մասնագետների ունակությունները կարող են ներառել հեղուկ պայթուցիկ նյութերի համակարգերի վնասազերծումը, աղքատացված ուրանի վերացումը և սովորական զինամթերքների մաքրումն իմպրովիզացված կրակոդ համակարգերի միջոցով: 4-րդ (ՊԶՎ) մակարդակի որակավորումը պետք է հստակորեն սահմանի յուրաքանչյուր անձի կողմից ստացված մասնագիտական կրթումը:

Որոշ ՊՊՄ ներառված են վերը բերված որակավորման մակարդակների ուղենիշներում, սակայն ներկայացնում են հատուկ կամ լրացուցիչ վտանգներ: Օրինակներ կարող են ծառայել Սպիտակ ֆոսֆոր (ՄՖ) պարունակող նյութերը, արկերը կամ մեծ քանակությամբ կատարվող վերացումների նկատմամբ պահանջները: Հատուկ ուշադրություն է պետք դարձնել լրացուցիչ դասընթացների անցկացման անհրաժեշտությանը կամ կոմպետենտության դասակարգի մեջ որոշակի բացառությունների իրականացմանը:

Որոշակի իրերի հաճախակի հայտնաբերման դեպքերում կարող է անցկացվել հատուկ դասընթաց այդ իրերի վերացման վերաբերյալ՝ օպերատորներին հնարավորություն տալու համար աշխատել դրանց հետ, այլ ոչ շարունակաբար փոխանցել խնդիրը փորձագիտական առավել բարձր մակարդակներին:

Պետք է նշել, որ ենթազինամթերքները կարող են լինել մասնավորապես վտանգավոր, և դրանց հետ պետք է գործ ունենան միայն 2-րդ կամ առավել բարձր մակարդակների որակավորում ունեցող անձինք:

4.3. Որակավորումների որակ և աուդիտ

ԱԳԱՄ և ականազերծման կազմակերպությունները պետք է մշակեն գործունեության չափանիշներ, գնահատման համապատասխան գործիքներ և ընթացակարգեր՝ ՊԶՎ օպերատորների կոմպետենտության մակարդակը և որակը գնահատելու նպատակով: Սրանք կարող են ներառել գրավոր թեստերը, գործնական վարժությունները, առաջադրանքի ներկայացումները կամ ՊԶՎ գործողությունների ժամանակ գործունեության գնահատման ընթացակարգերը:

CWA 15464:2005 – Մարդասիրական ականազերծման գործողություն – ՊԶՎ կոմպետենտության չափորոշիչները (5 մաս) ուղեցույցներ է տրամադրում ՊԶՎ 1-ին, 2-րդ և 3-րդ մակարդակների համար անհրաժեշտ կոմպետենտությունների վերաբերյալ և մշակված է ՊԶՎ օպերատորների զարգացման և ներուժի ստեղծման պլանավորման գործընթացին աջակցելու նպատակով: Նրա օգտագործումը կարող է նաև օգնել բարելավել ՊԶՎ աշխատանքներում ներգրավված օպերատորների կրթության և կոմպետենտության գնահատումը:

4.4. Զեզոքացման և վնասազերծման ընթացակարգեր

Առանձին ականները կամ ՊՊՄ-ները պետք է վերացվեն կամ չեզոքացվեն հենց տեղերում այն ժամանակ, երբ անվտանգ չէ դրանց տեղափոխումը դեպի մոտակա վերացման կետ: Այլ ամենի հետ մեկտեղ, սա կօգնի նվազեցնել տարածքի աղտոտվածությունը մետաղական մասնիկներով, որոնք տարածվում են տեղում կատարված պայթյունների հետևանքով: Ականի կամ ՊՊՄ-ի, կամ նրանց որոշակի տեսակի տեղափոխման կամ չտեղափոխման որոշումը պետք է հիմնված լինի համապատասխանաբար կրթված ՊԶՎ օպերատորի կողմից իրականացված գնահատման վրա:

Եթե պայթուցիչի համակարգն այնպիսին է, որ անվտանգ է տեղափոխություն կատարել դեպի մոտակա վերացման կետ, այն կարող է տեղափոխվել: Եթե պայթուցիչի համակարգը թույլ է տալիս երաշխավորել զինամթերքի անվտանգությունը չեզոքացման և/կամ վնասազերծման միջոցով, այն պետք է վնասազերծվի նախքան վերացման համար հարմար վայր տեղափոխվելը: Համայնքի հետ հաղորդակցման գործառնությունը, որն ապահովում է տեղական բնակչության իրազեկությունը կատարվող գործողությունների վերաբերյալ, պետք է լինի շարունակաբար կրկնվող գործողություն, որը համակցված է ՊԶՎ գործողությունների հետ:

ՊԶՎ ամբողջական կարողություններ ունեցող ակննազերծող կազմակերպությունները պետք է չեզոքացման և վնասազերծման ընթացակարգերի համար պատրաստեն Գործառնական Ստանդարտ Ընթացակարգեր (ԳՍԸ-ներ), որոնք կիրառելի են հայտնաբերման հավանականություն ունեցող ակննների և ՊՊՄ-ների համար և համապատասխանում են միջազգայնորեն ընդունելի ՊԶՎ պրակտիկաներին:

Եթե ակննազերծող կազմակերպությունը չունի անհրաժեշտ ՊԶՎ ամբողջական կարողություններ կամ հնարավորություն չունի որպես ենթակապալառուներ ձեռք բերել այդ կարողություններն ունեցող անձանց կամ կազմակերպություններ, ապա այն պետք է նշի, նույնացնի և հաշվետվություն ներկայացնի հայտնաբերված ցանկացած ակննի կամ ՊՊՄ վերաբերյալ: Այնուհետև ԱԳԱՄ պատասխանատու կլինի համապատասխան ՊԶՎ պատասխան տրամադրելու համար:

Չեզոքացման և վնասազերծման ընթացակարգերը չպետք է անհրաժեշտ լինեն մեծաքանակ կամ առանձին ԼՊԶ համար, քանի որ ըստ էության նրանք չպետք է լինեն լիցքավորված կամ չպայթած:

4.5. Վերացման ընթացակարգեր

Ակննազերծող կազմակերպությունները պետք է ԳՍԸ-ներ պատրաստեն համապատասխան ակննների և ՊՊՄ-ների արդյունավետ և անվտանգ վերացման համար: Սրանք պետք է ներառեն տեղերում ակննների և ՊՊՄ-ների վերացումը, կամ ակննների և ՊՊՄ-ների, ներառյալ ԼՊԶ մեկ առ մեկ վերականգնումը և վերացումը: Մեծաքանակ ԼՊԶ վերացումը պետք է առաջարկվի և իրականացվի համապատասխանորեն վերապատրաստված ՊԶՎ օպերատորների կողմից: Հատուկ ուշադրություն է պետք դարձնել պայթուցիչի և մասնատման ազդեցությունների կանխարգելմանը, որոնք առաջ են գալիս ակննի կամ ՊՊՄ վերացման հետևանքով: Մեծաքանակ վերացումների համար ընտրված տեղամասերը պետք է տեղակայված լինեն բավականաչափ հեռու բնակելի տարածքներից՝ որևիցե ռիսկ չներկայացնելու նպատակով: ՀԱԳՄՉ 10.20-ը ուղենիշներ է ներկայացնում ակննազերծման տեղամասերի անվտանգ հեռավորությունների վերաբերյալ: ՀԱԳՄՉ 10.70-ը ուղենիշներ է ներկայացնում ակննազերծման գործողությունների ընթացքում շրջակա միջավայրի պաշտպանության նվազագույն միջոցառումների վերաբերյալ:

4.6. Ակննների և ՊՊՄ-ների տեղափոխումը, նրանց հետ աշխատանք և պահեստավորում

Երբ ակննները կամ ՊՊՄ-ները տեղափոխվում են պահեստավորման նպատակով կամ մեծաքանակ վերացման վայրեր, ակննազերծող կազմակերպությունները պետք է կիրառեն ազգային չափորոշիչները, որոնք պետք է հղումներ ներառեն պայթուցիչ կոմպոնետների տեղափոխման, նրանց հետ աշխատանքի և պահեստավորման վերաբերյալ համապատասխան ազգային օրենսդրությանը և ընթացակարգերին: Ազգային չափորոշիչների գոյություն չունենալու կամ անպատշաճ լինելու դեպքում ակննազերծող կազմակերպությունը պետք է կիրառի ՀԱԳՄՉ 10.50-ում բերված ընդհանուր սկզբունքները:

5. Պարտավորություններ

5.1. Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)

ԱԳԱՄ պետք է.

- ա) սահմանի և պահպանի ՊԶՎ ընթացակարգերի ազգային չափորոշիչները;
- բ) սահմանի և պահպանի ՊԶՎ օպերատորների որակավորման ազգային չափորոշիչները;
- գ) սահմանի և պահպանի ՊԶՎ գործողություններում ներգրավված ականազերծող կազմակերպությունների հավաստագրման հնարավորությունը;
- դ) սահմանի և պահպանի ՊԶՎ գործողություններում ներգրավված ականազերծող կազմակերպությունների արդյունավետության և անվտանգության վերահսկման հնարավորությունը;
- ե) ստեղծի ՊԶՎ միջադեպերի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման ազգային համակարգեր, և
- զ) որտեղ անհրաժեշտ է երկկողմանի և միջազգային պայմանավորվածությունների համաձայն աջակցություն փնտրել այլ կառավարություններից՝ կապված ՊԶՎ ընթացակարգերի և ՊԶՎ գործողությունների համար անվտանգ և արդյունավետ ազգային չափորոշիչների մշակման նպատակով անհրաժեշտ մասնագիտական փորձագիտության և տեղեկատվության ստացման հետ:

5.2. Ականազերծող կազմակերպություններ

Ականազերծող կազմակերպությունը պետք է.

- ա) ԱԳԱՄ կամ նրա անունից գործող կազմակերպության կողմից ստանա ՊԶՎ գործողությունների իրականացման հավաստագիրը:
- բ) Սահմանի և պահպանի ազգային չափորոշիչներին կամ ՀԱԳՄՉ-ին համապատասխանող ԳՍԸ-ները և ՊԶՎ գործողությունները և այլ համապատասխան չափորոշիչները և կանոնակարգերը, որոնք արտացոլում են տեղական իրավիճակները և հանգամանքները:
- գ) Ապահովի ՊԶՎ օպերատորների կոմպետենտությունը և անհրաժեշտ կրթումը:
- դ) Կայուն, արդյունավետ և անվտանգ կերպով կիրառի ԳՍԸ-ները և ՊԶՎ գործողությունները:
- ե) Ապահովի համայնքի լիարժեք տեղեկացվածությունը տարածքում իրականացվող ՊԶՎ միջոցառումների և դրանց հետևանքների վերաբերյալ (մասնավորապես կապված մաքրման խորության հետ):

Հավելված Ա (Նորմատիվ) Փաստաթղթեր

Հետևյալ նորմատիվ փաստաթղթերը պարունակում են դրույթներ, որոնք այս տեքստի հղումների միջոցով կազմում են չափորոշիչի այս մասի դրույթները: Ամսաթվեր պարունակող հղումների դեպքում՝ այդ հրապարակումներում հետագայում կատարված փոփոխությունները կամ վերանայումները չեն կիրառվում: Սակայն չափորոշիչի այս մասի վրա հիմնված համաձայնագրերի կողմերին խրախուսվում է հնարավորություն գտնել՝ ստորև նշված նորմատիվ փաստաթղթերի առավել թարմ տարբերակները կիրառելու համար: Ամսաթիվ չպարունակող հղումների դեպքում կիրառվում է այդ նորմատիվ փաստաթղթի ամենավերջին տարբերակը: ISO-ի և IEC-ի անդամներն ունեն վավեր ISO կամ EN գրանցամատյան:

- ա) ՀԱԳՄՉ 04.10 Ականազերծման գործողությունների տերմիններ, սահմանումներ և հասկացումներ;
- բ) ՀԱԳՄՉ 09.10 Վնասազերծման պահանջներ;
- գ) ՀԱԳՄՉ 09.11 ՄԳՏՎ;
- դ) ՀԱԳՄՉ 10.70 ԱԱՀ՝ շրջակա միջավայրի պաշտպանություն;
- ե) ՀԱԳՄՉ 10.20 ԱԱՀ՝ ականազերծման տեղամասի անվտանգություն;
- զ) ՀԱԳՄՉ 10.50 ԱԱՀ՝ պայթուցիկ նյութերի պահեստավորում, տեղափոխում, և նրանց հետ աշխատանք;
- է) CWA 15464:2005 Մարդասիրական ականազերծման գործողություններ՝ ՊԶՎ կոմպլեքսային չափորոշիչներ (5 մաս):

Տեղեկատվական հղումներ՝

- ա) ԱԳՏՆ զինամթերքների մեծաքանակ վնասազերծման վերաբերյալ;
- բ) ԱԳՏՆ աղքատացված ուրանի վնասազերծման վերաբերյալ;
- գ) ԱԳՏՆ հեղուկ պայթուցիչով լիցքավորված համակարգերի վնասազերծման վերաբերյալ;
- դ) ԱԳՏՆ վառելիքով օդային պայթուցիչների համակարգի վերաբերյալ;
- ե) ԱԳՏՆ պայթյունավտանգ տարածքի վտանգի սահմանման վերաբերյալ;
- զ) Զինամթերքների և պայթուցիկ նյութերի կանոնակարգեր՝ ՄԱԿ դաշտային առաքելությունների կողմից օգտագործելու նպատակով:

Պետք է օգտագործվի թվարկված փաստաթղթերի վերջին տարբերակը/հրատարակությունը: Այս չափորոշիչում կիրառված բոլոր փաստաթղթերի պատճենները պահպանվում են ՄԱԺՄԿ-ում (Մարդասիրական ականազերծման Ժնևի միջազգային կենտրոն): ՀԱԳՄՉ չափորոշիչների, ուղղորդիչ սկզբունքների և փաստաթղթերի վերջին տարբերակների/թողարկումների գրանցամատյանը պահպանվում է ՄԱԺՄԿ կողմից և տեղակայված է ՀԱԳՄՉ կայքէջում (տես՝ www.mineactionstandards.org): ԱԳԱՄ-ը, գործատուները և շահագրգիռ այլ մարմիններ ու կազմակերպություններ պետք է նախքան ականազերծման ծրագրեր սկսելը ձեռք բերեն դրանց պատճենները:

Հավելված Բ
(Տեղեկատվական)
Տերմիններ, սահմանումներ և հապավումներ

ՀԱԳՄՉ մեջ օգտագործվող տերմինների և սահմանումների ամբողջական ցանկը ներկայացված է ՀԱԳՄՉ 04.10-ում:

Փոփոխությունների գրանցում

ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կառավարում

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքը ենթակա է պաշտոնական վերանայման երեք տարին մեկ, սակայն սա չի բացառում այդ երեք տարիների ընթացքում փոփոխությունների կատարումը՝ ելնելով գործառնական անվտանգության և արդյունավետության կամ խմբագրական հանգամանքներից:

Այս ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կատարման դեպքում դրանք համարակալվում են և այդ փոփոխությունների կատարման ամսաթիվն ու ընդհանուր մանրամասները նշվում են ստորև բերված աղյուսակում: Փոփոխությունները նաև պետք է նշվեն ՀԱԳՄՉ-ի առաջին էջում՝ թողարկման ամսաթվի տակ ներառելով «Ներառված են փոփոխություն թիվ 1 և այլն» արտահայտությունը:

Յուրաքանչյուր ՀԱԳՄՉ-ի պաշտոնական վերանայումից հետո կարող են թողարկվել նոր խմբագրությունները: Մինչև նոր հրատարակությունը կատարված փոփոխությունները կընդգրկվեն նոր հրատարակության մեջ և փոփոխությունների աղյուսակը կմաքրվի: Դրանից հետո կրկին կսկսվի փոփոխությունների գրանցումը, մինչև նոր վերանայում իրականացվի:

ՀԱԳՄՉ-ի ամենավերջին փոփոխությունները այն տարբերակներն են, որոնք տեղադրվում են ՀԱԳՄՉ-ի կայքէջում՝ www.mineactionstandards.org:

Թիվ	Ամսաթիվ	Փոփոխության մանրամասներ